

PEARLS OF ARMENIAN HERITAGE

Սրբոց Առաքելոցն Եւ Առաջին Լուսաւորչացն Թաղէնսի Եւ Բարթողիմէնսի

Քրիստոսի լոյսը Հայաստանն եւ Հայ ժողովուրդին բերողները եղան Յիսուսի աշակերտներէն՝ Ս. Թաղէնսի ու Ս. Բարթողիմէնսի առաքեալեաները, որոնք կոչուեցան առաջին լուսաւորիչներ:

Թաղէնս առաքեալ աւետարանին մէջ տարբեր անուններով կը յիշուի: Կարգ մը տեղեր ան ճանչուած է որպէս Ղեբէնս (Մթ. 10.3), Յուդայի եղբայր Յակոբոս (Ղկ. 6.16), Յուդա՝ ոչ Իսկարիովտացի (Յնն. 14.22) եւ Յուդա Յակոբեան (Գրծ Առաք. 1.13):

Թաղէնս առաքեալ հետեւելով Քրիստոսի պատգամին, նախ կ'երթայ Եդեսիա, ուր կը բժշկէ Աբգար թագաւորը, որ Քրիստոսին նամակ դրկած էր եւ բժշկութիւն խնդրած: Եդեսիայէն ետք կ'անցնի Հայկական շրջանները ուր քարոզչութեամբ կը զբաղի եւ հրաշքներ կը գործէ շատեր դարձի բերելով: Թաղէնս առաքեալ կը յաջողի Սանատրուկ թագաւորին դուստրը՝ Սանդուխտը դարձի բերել եւ Քրիստոնէութիւն ընդունիլ: Թաղէնս առաքեալ եւ Սանդուխտ կոյսը կը նահատակուին Սանատրուկ թագաւորի հրամանով:

Ս. Թաղէնսի գերեզմանը կը գտնուի Պարսկաստանի Ատրպատական գաւառին մէջ: Իր յիշատակին համար մեծ եկեղեցի մը կառուցուած է ուր ուխտի համար կ'այցելեն սուրբի տօնին:

Բարթողիմէնս առաքեալ, նոյնպէս կը նկատուի Հայ ժողովուրդի առաջին լուսաւորիչը: Յովհաննէս աւետարանիչը զինք կը յիշատակէ Նաթանայէ անունով երբ Քրիստոս զինք կը կանչէ դառնալու համար իր տասներկու աշակերտներէն մին:

Առաքեալը սկզբնական շրջանին կը քարոզէ եւ Քրիստոսի խօսքը կը տարածէ Պարսկաստանի մէջ, ապա կ'անցնի Հայաստան ուր կը միանայ Թաղէնս առաքեալին եւ միասնաբար կը շարունակեն առաքելութիւնը:

Բարթողիմէնս առաքեալը արքունիք մտնելով դարձի կը բերէ Սանատրուկ թագաւորին քոյրը, որմէ ետք ալ կը նահատակուի:

Հայ եկեղեցոյ աւանդութեան համաձայն Քրիստոսի կողը խոցուած գեղարդը Ս. Թաղէնս առաքեալի հետ կը հասնի Հայաստան: Ան մինչեւ օրս կը գտնուի Հայ եկեղեցոյ սեփականութեան ներքոյ: Շատ մը հրաշքներ արձանագրուած են Ս. Գեղարդի երկու հազարամեայ Հայաստան գտնուած շրջանին: Քրիստոսի ժամանակէն մնացած եւ պահպանուած հազուագիտ իրերէն է:

Այս շաբաթ օր Հայ եկեղեցին պիտի նշէ Ս. Թաղէնս եւ Ս. Բարթողիմէնս առաքեալներու եւ Հայ ազգի առաջին լուսաւորիչներու տօնը: